ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի ընթացքում ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պետական բյուջեից 2017 թվականին ՀՀ Արագածոտնի մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվող ծրագրերին հատկացվել է 456,125.0 հազ. ՀՀ դրամ / տես հավելված 1/, որից՝

1. Ապարանի Բաղրամյան 43 հասցեում գտնվող վթարային շենքի փոխարեն նոր բնակելի շենքի կառուցման համար՝ 70,000.0 հազ. ՀՀ դրամ:
2. ՀՀ պետական բյուջեի պահուստային ֆոնդից հրատապ ծրագրերի իրականացման համար – 384,400.0 հազ. ՀՀ դրամ:
3. Մարզի խոշորացվող համայնքներում հրատապ ծրագրերի իրականացման համար ՀՀ կառավարության կողմից հատկացված 1,725.0 հազ. ՀՀ դրամ գումարով պատրաստվել են 9 օբյեկտի նախագծանախահաշվային փաստաթղթեր:

Հրատապ ծրագրի շրջանակներում դպրոցաշինության բնագավառին հատկացվել է 52,332.3 հազ. դրամ, բնակարանաշինությանը՝ 42,757.5 հազ. դրամ, բնակելի շենքերի տանիքների վերանորոգման համար՝ 44,105.9 հազ. դրամ, մշակութային օբյեկտների վերանորոգման համար՝ 75,391.1 հազ. դրամ, մանկապարտեզների վերանորոգման համար՝ 17,880.7 հազ. դրամ, ջրամատակարարման և ջրահեռացման բնագավառին հատկացվել է 11,028.1 հազ. դրամ, գազամատակարարման աշխատանքներին՝ 1,139.8 հազ. դրամ, փողոցային լուսավորության կառուցմանը՝ 27,064.0 հազ. դրամ, ճանապարհաշինության բնագավառին՝ 92,439.3 հազ. դրամ:

Մրցույթների արդյունքում տնտեսված գումարների վերաբերյալ տեղեկատվություն

NN	Աշխատանքների անվանումը	Հատկացում /հազար դրամ/	Պայմանագրային գինը /հազար դրամ/	Տնտեսում /հազար դրամ/
1	Նախագծային աշխատանքներ	20,261.000	18,502.000	**1,759.000**
2	Շինարարական աշխատանքներ	313,315.990	224,341.000	**88,974.990**
3	Տեխնիկական հսկողություն	6,213.900	1,954.970	**4,258.922**
4	Հեղինակային հսկողություն	1,851.610	1,851.610	-

	Ընդամենը	**341,642.492**	**246,649.580**	**94,992.912**

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի պատվիրատվությամբ՝ պետական միջոցների հաշվին իրականացվող բոլոր ծրագրերի շրջանակներում նախատեսված շինարարական աշխատանքներն իրականացվել են պայմանագրերով սահմանված ժամկետներում՝ հաստատված նախագծա-նախահաշվային փաստաթղթերին համապատասխան:

Պետական միջոցների հաշվին իրականացված ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հավելված 1-ով:

ՀՀ Արագագածոտնի մարզպետի 2017 թվականի հունվարի 12-ի «ՀՀ Արագագածոտնի մարզի համայնքներում 2017 թվականի ընթացքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» N 3-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի համաձայն՝ ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարների քաղաքաշինական գործունեության նկատմամբ վարչական հսկողություն է իրականացվել 38 համայնքում: Հայտնաբերվել է 4 ապօրինի շինարարություն: Ձեռնարկվել են համապատասխան միջոցներ ապօրինի շինարարության կանխման, կասեցման և վերացման ուղղությամբ:

Մարզի համայնքապետերին քաղաքաշինության գործունեության բնագավառում տրվել է խորհրդատվություն և մեթոդական օգնություն:

Կառուցապատման գործառույթները (հողահատկացում, ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրում, ճարտարապետահատակագծային նախագծերի փաստաթղթերի համաձայնեցում) ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով մարզպետի կողմից համաձայնեցվել են ՀՀ քաղաքաշինության նախարարության հետ: Մարզի համայնքների ղեկավարների կողմից համաձայնեցման նպատակով ՀՀ Արագածոտնի մարզպետարան ներկայացվել է տարածքների գործառնական նշանակության փոփոխման 9 առաջարկություն: ՀՀ Արագածոտնի մարզպետի կողմից համաձայնեցվել է 4 առաջարկություն, իսկ 5 առաջարկություն մերժվել է: ՃՀԱ-ների ու նախագծերի համաձայնեցման ներկայացված 9 առաջարկություն համաձայնեցվել է մարզպետի կողմից: ՀՀ կառավարության 29.12.05թ. թիվ 2404 որոշման պահանջներին համապատասխան՝ առաջարկությունները ներկայացվել են ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե՝ համաձայնեցման համար:

Միավորված համայնքների հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման նպատակով համապատասխան համայնքների ղեկավարների հետ տարվում են անհրաժեշտ աշխատանքներ:

Համայնքներից ուղարկված հողհատկացման հայտերը ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կողմից ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի քննարկմանն են ներկայացվել և համաձայնվեցվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

Մշակվել և ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեին են ներկայացվել ՀՀ պետական բյուջեի հաշվին 2018-2020 թվականների ՀՀ Արագածոտնի մարզի ՄԺԾ ծրագրի և 2018 թվականին ՀՀ Արագածոտնի մարզում նախատեսվող կապիտալ ծախսերի բյուջետային հայտի նախագծերը:

Հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները հաշվի առնող քաղաքաշինական նորմերի ներդրման և պահպանման համար մեր կողմից կատարվում է հետևողական և շարունակական աշխատանք: Մասնավորապես՝ մարզի բոլոր համայնքապետերին հանձնարարվել է նոր կառուցվող և վերանորոգվող շենք-շինությունների նախագծային առաջադրանքները տրամադրել հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի համար սահմանված քաղաքաշինական նորմերի պահանջներին համապատասխան:

Աշտարակ համայնքի քաղաքային զբոսայգու վերակառուցման նախագծում հաշվի են առնված վերը նշված քաղաքաշինական նորմերի պահանջները:

«Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի տնօրենին առաջարկվել է ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի պատվիրատվությամբ իրականացվող Քուչակի մշակույթի տան կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերում կատարել փոփոխություն՝ թեքահարթակների կառուցման համար:

Աշտարակ քաղաքի մարզային գրադարանը սակավաշարժ խմբերի համար հասանելի դարձնելու նպատակով մարզպետարանի քաղաքաշինության վարչության կողմից մշակվել է վերելակի նախագիծ -առաջարկ՝ ՀՀ մշակույթի նախարարություն ներկայացնելու համար:

ՈՒսումնասիրվել և ճշգրտվել է մարզում առկա վթարային օբյեկտների, կիսակառույցների, ինչպես նաև առաջնահերթ հիմնանորոգման կարիք ունեցող օբյեկտների ցանկը, և ծրագրերում ներառելու նպատակով առաջարկություն է ներկայացվել համապատասխան մարմիններին:

Քաղաքաշինության բնագավառի առկա հիմնախնդիրները և գերակայությունները

Մարզում քաղաքաշինության բնագավառի կարևորագույն հիմնախնդիրներն են՝

- Թալին քաղաքի Քոթանյան 11 անավարտ բազմաբնակարան շենքն ունի 3 կիսակառույց (կառուցված է մոտ 40%) մասնաշենք՝ ընդամենը 118 բնակարանով: Թալին քաղաքի Քոթանյան 11 անավարտ բազմաբնակարան շենքի շինարարությունն ավարտին հասցնելու համար կպահանջվի շուրջ 400 մլն դրամ: Անհրաժեշտ է ավարտին հասցնել կիսակառույց շենքի շինարարական աշխատանքները:

- ՀՀ Արագածոտնի մարզպետարանի շենքը հիմնանորոգման կարիք ունի: Վարչական շենքի հիմնանորոգման համար անհրաժեշտ է շուրջ 300 մլն դրամ և գույք ձեռքբերելու համար՝ 50 մլն դրամ: Ընդհանուր առմամբ անհրաժեշտ կլինի շուրջ 350 մլն դրամ:

- Մարզի 7 անավարտ շինությունների շինարարության ավարտ: Դրանք են՝ Աշտարակ քաղաքում 2 կիսակառույց շինություն, Ապարան քաղաքում՝ 1, Ծաղկահովիտում՝ 2, Օհանավանում՝ 1 և Կաքավաձորում՝ 1 կիսակառույց շինություններ:(կիսակառույցների վերաբերյալ մանրամասն տվյալները տես առդիր 1)

- Խոշորացվող համայնքների տարածքային գոտևորման և գլխավոր հատակագծերի պատվիրում:

- Աշտարակի Վ. Պետրոսյանի անվան դպրոցը, Հնաբերդ և Շենավան համայնքների դպրոցներն ունեն վթարայնության III-IV աստիճան: Առաջարկվում է հիմնանորոգման կամ դրանց փոխարեն նորի կառուցման աշխատանքներ:

- Կարևոր հիմնախնդիրներից է մարզի հատուկ կարգավորման գոտիների նախագծի կազմումը, որն իր մեջ կներառի հատուկ կարգավորման օբյեկտների՝ Քասախի, Ամբերդի և Արքաշենի գետերի կիրճերի տարածքները:

2018 թվականի աշխատանքային ծրագրին համապատասխան իրականացվելիք աշխատանքները.

<u>Համայնքի ղեկավարի կողմից կազմվող նախագծման առաջադրանքի և վերջինիս հիման վրա մշակվող համայնքների գլխավոր հատակագծերի և գոտևորման նախագծերի համաձայնեցման աշխատանքների իրականացում</u>

Բյուրական, Կարբի, Օհանավան, Օշական, Ոսկեվազ, Փարպի համայնքների համայնքապետերի հետ համատեղ մշակման փուլում են գտնվում գլխավոր հատակագծերի և գոտևորման նախագծերի նախագծման առաջադրանքները:

Առաջարկությամբ դիմել ենք ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեին միջնորդելու ՀՀ կառավարությանը՝ միջոցներ հատկացնել ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքին հարակից Կարբի, Օհանավան, ՈՒշի, Սասունիկ, Օշական, Ոսկեվազ, Ոսկեհատ, Ագարակ, Փարպի, Բազմաղբյուր և Ղազարավան համայնքների տարածքներն ընդգրկող հատվածի տարածքային հատակագծման նախագիծ կազմելու համար:

ՀՀ կառավարության 2010թ. մարտի 4-ի թիվ 208-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ ՀՀ Արագածոտնի մարզի համայնքապետերին առաջարկվել է համայնքների 2018 թվականի բյուջեում նախատեսել ֆինանսական միջոցներ՝ համայնքների պարզեցված գլխավոր հատակագծերի մշակման համար:

Մարզում 11 աղբավայրերի կառուցում

ՀՀ Արագածոտնի մարզում գույքագրված 138 աղբավայրերից 11-ն ընտրվել են որպես հիմնական աղբավայրեր: Նախատեսվում է 2018 թվականի 1-ին եռամսյակում 2 աղբավայրերի վերակառուցում Սասունիկ և Ապարան համայնքներում և մինչև տարեվերջ՝ մարզի տարածքում ևս 9 աղբավայրերի կառուցում:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

ՀՀ Արագածոտնի մարզի գյուղական համայնքների և քաղաքների բնակելի ֆոնդի 98%-ը սեփականաշնորհված է: Բնակֆոնդի շահագործումը և սպասարկումը իրականացվում է սեփականատերերի կողմից: Բազմաբնակարան շենքերի կառավարումը գյուղական համայնքներում իրականացնում են համայնքները, Թալին քաղաքում՝ քաղաքապետարանը, Ապարան քաղաքում՝ 14 համատիրություններ, Աշտարակ քաղաքում՝ բազմաբնակարան շենքերի սպասարկման բաժինը:

Հետևողական աշխատանք է տարվել ազգաբնակչությանը մաքուր խմելու ջրով ապահովելու համար: Մարզում չի արձանագրվել սուր աղիքային հիվանդությունների բռնկման դեպք: Մարզի 35 համայնքների /այդ թվում 22 մանրածախ 13 մեծածախ) ջրամատակարարումն իրականացվում է <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի, իսկ մնացած համայնքներինը /79/ իրականացնում են համայնքների լոկալ ջրաղբյուրներից:

<<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ կողմից ջրի մատակարարման 176.8 մլն. դրամի ծառայության դիմաց գանձվել է 124.8 մլն. դրամ վարձավճար, կամ 71.0 %:

Մարզի երեք քաղաքներում և գյուղական բնակավայրերում իրականացվում է աղբահանություն: Քաղաքներում այն իրականացնում են քաղաքապետարանին կից

ստեղծված ձեռնարկությունները, իսկ գյուղերում՝ գյուղապետարանները: Մարզում գործում է Սասունիկի աղբավայրը, որտեղ կատարվում է աղբի վերամշակում և ծածկում << Էկո-Տեխ>> ՍՊԸ-ի կողմից: Աշտարակ քաղաքի և հարակից 17 բնակավայրերի աղբը տեղափոխվում է << Էկո-Տեխ>> ՍՊԸ-ի կողմից սպասարկվող Սասունիկի աղբավայր: Մարզի Ապարանի, Թալինի, Ծաղկահովիտի և Աշտարակի տարածաշրջանի մի քանի համայնքներում աղբահանությունն իրականացվում է համայնքապետարանների կողմից, և հավաքված աղբը տեղադրվում է 11 հիմնական աղբավայրեր:

Հայտնաբերված 136 աղբավայրերից 124-ը փակված է: Չփակված 1 աղբավայրի կոնսերվացման նախագծանախահաշվային փաստաթղթերը պատրաստ են: Կոնսերվացման աշխատանքներն առաջիկայում կսկսվեն:

Մարզում աշխատանքներ են տարվել աղբահանության կազմակերպման ուղղությամբ: Մարզի բնակավայրերում սանիտարական վիճակը բարելավելու, աղբահանություն իրականացնելու և բարեկարգելու նպատակով անցկացվել են սանիտարական միամսյակ և երեք համապետական շաբաթօրյակներ, որի մասին գրավոր տեղեկացվել է բոլոր համայնքների ղեկավարներին: Այդ ընթացքում համայնքներում իրականացվել են ինչպես սանմաքրման, աղբահանության, տարածքների բարեկարգման, այնպես էլ համայնքներ տանող ճանապարհների հարակից տարածքների մաքրման աշխատանքներ: Այդ աշխատանքները մեր կողմից տեղում ուսումնասիրվել և վերահսկվել են: Քանի որ սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքները շարունակական են, ամբողջ տարվա ընթացքում դրանք մեր ուշադրության կենտրոնում են և հսկողության տակ: Մարզպետի հանձնարարությամբ ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցառումներ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վիճակի բարելավման ուղղությամբ: Այդ հանձնարարականը ևս գրավոր ներկայացվել է բոլոր համայնքների ղեկավարներին և <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի Աշտարակի տեղամասի և Թալինի ու Ապարանի ենթատեղամասերի պետերին: Այդ աշխատանքները, ինչպես նաև խմելու ջրի վարակազերծման, ՕԿՋ-երի գլխամասերի պահպանման և արտաքին հոսքերի մուտքերը համակարգ կանխելու աշխատանքները մեր կողմից վերահսկվում են և գտնվում են մեր ամենօրյա ուշադրության կենտրոնում:

<<Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանոցների ու դիակիզարանների շահագործման մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջներով մարզի համայնքների գերեզմանոցների համար սահմանվել է իրավական հատուկ կարգավիճակ: Չափագրվել և քարտեզագրվել են բոլոր բնակավայրերի գերեզմանոցների տարածքները, կատարվել է գերեզմանատեղերի հաշվառում, համայնքների ղեկավարների կողմից կայացվել են գերեզմանատների իրավական հատուկ ռեժիմ սահմանելու մասին որոշումներ: Մեր կողմից գերեզմանատների և

գերեզմանատեղերի սահմանների և հուղարկավորությունների կազմակերպման օրենքով սահմանված կարգը վերահսկվում է: Պարբերաբար ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը և ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեին ներկայացվել է տեղեկատվություն կատարված աշխատանքների մասին՝ համաձայն կառավարության որոշմամբ հաստատված ձևերի և ժամանակացույցի: Համայնքի ղեկավարներին գրավոր առաջարկվել է համաձայն ժամանակացույցի կատարել կառավարության որոշման պահանջները:

հավելված 1

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

Հ/Հ	Ծրագրի անվանումը	Հատկացված գումարի չափը /հազար դրամ/
1	2	3
	ՀՀ Արագածոտնի մարզպետարանի պատվիրատվությամբ	**456,125.0**
	այդ թվում՝	
1	Ապարանի Բաղրամյան 43 հասցեում գտնվող վթարային շենքի փոխարեն կառուցվելիք նոր բնակելի շենքի կառուցում	**70,000.0**
2	ՀՐԱՏԱՊ ԾՐԱԳԻՐ	**384,400.0**
	որից՝	
2.1	Աշտարակ քաղաքի Սիսակյան փ. թիվ 14 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում	5,124.5
2.2	Աշտարակ քաղաքի Տիգրան Մեծ փ. թիվ 25 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում	4,919.6
2.3	Աշտարակ քաղաքի Ն. Աշտարակեցու թիվ 12 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում	5,022.9
2.4	Արուճի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում	12,382.2

2.5	Փարպիի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում	22,482.1
2.6	Օշականի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում	4,018.4
2.7	Լեռնարոտի համայնքային կենտրոնի վերանորոգում	2,417.3
2.8	ՈՒջանի մշակույթի տան վերանորոգում	14,852.4
2.9	Փարպիի խաչմերուկից Ղազարավան խաչմերուկի վերանորոգում	19,764.0
2.10	Արտաշավանի մանկապարտեզի վերանորոգում	8,947.8
2.11	Կոշ համայնքի նախադպրոցական մասնաշենքի վերանորոգում	9,467.7
2.12	Արագածոտն համայնքի խմելու ներքին ցանցի վերանորոգում	3,361.7
2.13	Ղազարավանի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում	2,968.3
2.14	Ոսկեվազ համայնքի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում	3,930.0
2.15	Ապարան քաղաքիԳ.Նժդեհի փ. թիվ 10 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում	5,490.1
2.16	Ափնագյուղի ներհամայնքային ճանապարհի վերանորոգում	6,488.0
2.17	Ձորագլուխ համայնքի հանդիսությունների սրահի հիմնանորոգում	4,971.5
2.18	Նիգավանի միջհամայնքային ճանապարհի հիմնանորոգում	14,444.5
2.19	Շենավանի հանդիսությունների սրահի հիմնանորոգում	4,961.6
2.20	Ծաղկահովիտ համայնքի Բժշկյան փ. թիվ 7 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում	6,047.9
2.21	Ծաղկահովիտ համայնքի Բժշկյան փ. թիվ 8 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում	8,956.1
2.22	Բերքառատի մշակույթի տան վերանորոգում	9,934.3
2.23	Գեղաձորի մանկապարտեզի վերանորոգում	8,932.9
2.24	Մելիքգյուղի հանդիսությունների սրահի վերանորոգում	8,968.4
2.25	Ռյա Թազայի դպրոցի գազամատակարարման ավարտ	1,139.8
2.26	Ծիլքարի համայնքային կենտրոնի վերանորոգում	6,059.2
2.27	Լեռնապարի դպրոցի արտաքին ջրամատակարարման կառուցում	5,016.1
2.28	Կաթնաղբյուրի դպրոցի վերանորոգում	17,802.8
2.29	Թաթուլի դպրոցի սպորտայի մասնաշենքի վերանորոգում	11,973.1
2.30	Կաքավաձորի մշակույթի տան վերանորոգում	12,885.6

2.31	Շղարշիկ-Կաթնաղբյուր ճանապարհի նորոգում	5,961.8
2.32	Եղնիկի հանդիսությունների սրահի վերանորոգում	5,007.2
2.33	Ներքին Սասնաշենի դպրոցի տանիքի վերանորոգում	13,088.7
2.34	Հացաշենի հանդիսությունների սրահի վերանորոգում	5,333.8
2.35	Թալին քաղաքի Խանջյան 25 բազմաբնակարան շենքի տանիքի վերանորոգում	5,007.2
2.36	Թալին քաղաքի Գայի փ. թիվ 21 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում	3,537.6
2.37	Սուսերի փողոցային լուսավորության կառուցում	2,338.3
2.38	Վերին Բազմաբերդի փողոցային լուսավորության կառուցում	4,993.2
2.39	Դավթաշենի փողոցային լուսավորության կառուցում	4,025.0
2.40	Հարթավան համայնքի փողոցային լուսավորության կառուցում	4,079.5
2.41	Ոսկեհատի խորքային հորի կառուցում	2,650.3
2.42	Նոր Ամանոս համայնքի փողոցային լուսավորության կառուցում	3,025.3
2.43	Աղձք համայնքի փողոցային լուսավորության կառուցում	3,012.2
2.44	Քուչակի փողոցային լուսավորության կառուցում	5,590.5
2.45	Ապարանի Բաղրամյան 43 հասցեում գտնվող վթարային շենքի փոխարեն կառուցվելիք նոր բնակելի շենքի կառուցում	42,757.5
2.46	Նախագծահետազոտական աշխատանքներ	20,261.0
3	Մարզի խոշորացվող համայնքներին հրատապ ծրագրերի իրականացման համար պատրաստվել են 9 օբյեկտի նախագծանախահաշվային փաստաթղթեր:	**1,725.0**